Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արշալույս Հարությունյան, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Սոչի, Ռուսաստանի Դաշնություն, 2023 թվականի հունիսի 7-ից 9-ը

3. Հրավիրող կողմը՝

Եվրասիական զարգացման բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Եվրասիական զարգացման բանկի կողմից կազմակերպվող ամենամյա Եվրասիական կոնգրեսին

5. Քննարկված թեմաները՝

Եվրասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԵԱԶԲ) կողմից կազմակերպված ամենամյա Եվրասիական կոնգրեսի (այսուհետ՝ Կոնգրես) ընթացքում անդրադարձ է կատարվել եվրասիական տարածքում համագործակցությանն ու տնտեսական ինտեգրմանը, տրանսպորտային-լոգիստիկ ենթակառուցվածքներին, անդրսահմանային պետություն-մասնավոր համագործակցությանը (այսուհետ՝ ՊՄԳ), միջտարածաշրջանային ներդրումային նախագծերին և Եվրասիայում թվային փոխակերպումներին:

Բացի այդ, Կոնգրեսի շրջանակներում անցկացվել է հատուկ լիագումար նիստ՝ ԵԱՏՄ և ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ:

Մասնավորապես, հունիսի 8-ին և 9-ին Կոնգրեսի ընթացքում պանելային քննարկումներ են անցկացվել հետևյալ թեմաների շուրջ՝

- Տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում միջսահմանային ՊՄԳ-ների իրականացման միջազգային փորձը (գործնական օրինակներ),

- ԵԱՏՄ և Կենտրոնական Ասիայի երկրներում ենթակառուցվածքային նախագծերի իրականացման համար անդրսահմանային ՊՄԳ մեխանիզմի կիրառման հնարավորությունների գնահատումը, անդրսահմանային ՊՄԳ-ների համար ԵԱԶԲ-ի կողմից մշակված ուղեցույցներ,
- Բարձր տեխնոլոգիաները՝ որպես Եվրասիական ինտեգրման շարժիչ ուժ,
- Ո՞ր միջուկային տեխնոլոգիաները և ազգային տնտեսության ո՞ր ոլորտներն են այժմ առավել պահանջված եվրասիական տարածքում,
- Ինչպե՞ս են միջուկային նախագծերը նպաստում եվրասիական տարածքում ինտեգրմանը,
- Թվային փոխակերպումը և նոր տնտեսական համակարգի ձևավորումը Եվրասիայում,
- «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցք. Եվրասիական տրանսպորտային շրջանակի դերը նոր լոգիստիկայի զարգացման գործում. «Հյուսիս-Հարավ» և «Արևմուտք-Արևելք» տրանսպորտային միջանցքների փոխգործակցության սիներգիա.
- Վճարովի շահագործման սկզբունքների հիման վրա տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման նախագծերի ֆինանսավորման հետ կապված արդիական խնդիրներ և մարտահրավերներ. ո՞րն է գլոբալ տեսակետը:
- «Վերին Լարս» տրանսպորտային և լոգիստիկ համալիրի կառուցման նախագիծը. նոր հնարավորությունների ստեղծում ԵԱՏՄ անդամ երկրների բեռների սեփականատերերի, փոխադրողների և մատակարարների համար:

Ինչպես նաև հունիսի 9-ին մասնակցություն է ապահովվել ԵԱՏՄ և ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ «Ապագայի Եվրասիա. մարտահրավերներից մինչև լուծումներ» խորագրով լիագումար նիստին, որի ընթացքում մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների կողմից անդրադարձ է կատարվել հետևյալ առանցքային հարցադրումներին՝

- Որո՞նք են Եվրասիական տարածաշրջանի երկրների ուժեղ կողմերը և ինչպե՞ս համատեղել դրանք,
- Ի՞նչն է այսօր ամենից շատ խանգարում եվրասիական տարածաշրջանի երկրների զարգացմանը,

- Ի՞նչ է անհրաժեշտ մեր երկրներում տրանսպորտային և լոգիստիկ միջանցքների զարգացման համար,
- Տրանսպորտի, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության, թվային ենթակառուցվածքների ո՞ր նախագծերն են առաջնահերթ,
- Ի՞նչ միջոցներ են անհրաժեշտ երրորդ երկրներից ներդրումային և միջանկյալ ապրանքների ներմուծման փոխարինման համար,
- Դեպի կանաչ տնտեսությանը անցման ո՞ր փուլում են այժմ գտնվում եվրասիական տարածաշրջանի երկրները: Ի՞նչ է պետք անել մեր երկրների ներուժը բարձրացնելու համար:
- Ո՞րն է զարգացման ինստիտուտների դերը Եվրասիական տարածաշրջանում կայուն տնտեսական աճի խթանման գործում,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ամենամյա Կոնգրեսի շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ ինչպես ԵԱԶԲ բարձրաստիճան պաշտոնյաների, այնպես էլ այլ միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես, հանդիպում է տեղի ունեցել ԵԱԶԲ խորհրդի նախագահ Նիկոլայ Պոդգուզովի և ԵԱԶԲ խորհրդի նախագահի տեղակալ Դենիս Իլյինի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ԵԱԶԲ-ի կողմից ՀՀ–ում իրականացված ներդրումային նախագծերը և նոր ներդրումների իրականացման հնարավորությունները ու առաջնահերթությունները: Ինչպես նաև քննարկվել է ԵԱԶԲ–ում ՀՀ-ի մասնավոր ներդրումային պրոյեկտների ֆինանսավորման սահմանաչափի բարձրացման հարցը:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի նախագծային բաժնի գործադրի տնօրեն Անդրեյ Շիրոկովի հետ, հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ մակրոտնտեսական և հարկաբյուջետային վերջին զարգացումները, ներկայումս հիմնադրամի հետ մեկնարկած բյուջետային աջակցության վարկի բանակցությունների ընթացքը, ՀՀ տնտեսական զարգացումների վերաբերյալ հիմնադրամի կողմից իրականացված վերլուծությունները, ինչպես նաև քննարկվել են համագործակցության վերաբերյալ հարցեր:

Առանձին հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել ՌԴ ֆինանսների նախարարության Ֆինանսական գիտահետազոտական ինստիտուտի ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, ՌԴ ՖՆ Ֆինանսական գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Նազարովի հետ քննարկվել են «Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական և բյուջետային կանխատեսումների համակարգի զարգացում» թեմայով համագործակցության վերաբերյալ հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԵԱԶԲ խորհրդի նախագահի տեղակալ Դենիս Իլյինի հետ քննարկումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵԱԶԲ-ում ՀՀ մասնավոր ներդրումային պրոկեկտների ֆինանսավորման սահմանաչափը մինչև 500 մլն ԱՄՆ դոլար բարձրացման վերաբերյալ: Բացի այդ, Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի նախագծային բաժնի գործադրի տնօրեն Անդրեյ Շիրոկովի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել ակտիվ համագործակցել մակրոտնտեսական վերլուծությունների և կանխատեսումների ուղղությամբ, մասնավորապես՝ ներկայումս հիմնադրամի կողմից մշակվող մակրոտնտեսական խոցելիությունների գնահատման և ախտորոշման համակարգի շրջանակներում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

13 հունիսի, 2023թ

.